ՆԱԽԱԳԻԾ
---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
---

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման 8-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 03 խմբի 02 դասի «03. «Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» ծրագրով նախատեսված 58386700 դրամ պետական աջակցությունը տրամադրել «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հրատարակման ծախսերի բաշխումը կատարել համաձայն հավելվածի։

Հավելված

ՀՀ կառավարության 2009 թվականի
---------- «-----» -ի N որոշման

Ց Ա Ն Կ

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 08 բաժնի 03 խմբի
02 դասի «03.«Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում»
հրատարակման ծախսերի բաշխման

| Հ/հ | Ամսագրերի անվանումը | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1. | Պատմաբանասիրական հանդես | 7550.0 |
| 2. | Լրաբեր հասարակական գիտություններ | 5770.0 |
| 3. | Հայաստանի քիմիական հանդես | 3300.0 |
| 4. | Հայաստանի բժշկագիտություն | 3550.0 |
| 5. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա | 2530.0 |
| 6. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Զեկույցներ | 5100.0 |
| 7. | Հայաստանի կենսաբանական հանդես | 2730.0 |
| 8. | Աստղաֆիզիկա | 3850.0 |
| 9. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա | 2510.0 |
| 10. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա | 2520.0 |
| 11. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտությունների սերիա | 2200.0 |
| 12. | ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ երկրի մասին | 1900.0 |
| 13. | Նեյրոքիմիա | 3500.0 |
| 14. | «Գիտության աշխարհում» | 7076.7 |
| 15. | Մենագրություններ | 4300.0 |
| | Ընդամենը | 58386,7 |

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ հրատարակում է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող գիտական 14 հանդես/ տարեկան 56 համար, ավելի քան 400 տպ. մամուլ/, որոնք հիմնադրվել են հիմնականում 1943-1966 թվականներին։ Դրանցում արտացոլվում են ՀՀ ԳԱԱ համակարգի բոլոր ինստիտուտների գիտական հետազոտությունների արդյունքները, հայագիտության, ֆիզիկամաթեմատիկական, բնական և հասարակագիտական գիտությունների ամենատարբեր ուղղությունների գծով։

ՀՀ ԳԱԱ ամսագրերի գիտական վարկի մասին է վկայում այն փաստը, որ դրանցից հինգը՝ «Աստղաֆիզիկա», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Մեխանիկա» և «Նեյրոքիմիա» հանդեսները թարգմանաբար վերահրատարակվում են արտերկրում։ «Պատմաբանասիրական հանդեսը» համարվում է միջազգային հայագիտական ամենահեղինակավոր հրատարակություններից մեկը, իսկ «Գիտության աշխարհում» հանդեսը՝ հանրապետությունում ամենաշատ ընթերցվող և ճանաչում գտած գիտահանրամատչելի հրատարակությունը։